

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ
ԼԵԶՎԻ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՐԵՐՅԱԼ

Աստվածաշնչի թարգմանությունների համառոտ պատմությունը կարևոր է և անհրաժեշտ այն առումով, որ լույս է սփռում բնագիր լեզուներում և թարգմանություններում առկա լեզվաոճական առանձնահատկությունների, բնորոշ հատկանիշների, թարգմանվող լեզվի, թարգմանության ժամանակի, կիրառվող թարգմանական սկզբունքների և այլնի վրա:

Այսպես, օրինակ, հայերեն գրաբար վաղագույն թարգմանությունները, թարգմանված լինելով հունարեն, եբրայերեն և ասորերեն բնագիր լեզուներից, պահպանում են հիշյալ լեզուներին հատուկ որոշ էական կողմեր, ինչպիսիք են.

1. շարադասությունը,
2. հասկացությունների նույնական փոխանցումը,
3. պատճենահանումը, սակայն պահպանելով, բնագրային-բառակազմական ձևերը,
4. տվյալ լեզուներից փոխառված անունների, հասկացությունների ներմուծումը. դրանով իսկ համապատասխան լեզվաոճական ձևավորում ստեղծելը,
5. հայերենի համապատասխանեցումը տվյալ բնագրային լեզվին, որը հանգեցնում է հայոց լեզվի հնարավորությունների ընդարձակման՝ արտահայտության նոր կերպերով ու ձևերով:

Հետագա թարգմանություններում, աստիճանաբար, շարադասությունը, թեև դանդաղորեն, բայց փոխում է իր դասավորությունը՝ ըստ հայերենի, պահպանվում են հայերեն պատճենահանված շատ բառեր, թեև երբեմն հանդես են գալիս բուն հայերեն համարժեքներ: Ներմուծված որոշ հասկացություններ փոխարինվում կամ թարգմանվում են հայերեն համապատասխան համարժեքներով:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ընթացքի՝ քննությունը գրաբարից մինչև ժամանակակից գրական արևմտահայերեն ու արևելահայերեն,

հանգեցնում է այն հետևություն, որ, ի վերջո, պահպանելով աստվածաշնչյան իմաստները և երանգավորումները, թարգմանված տեքստերը դառնում են առավել հայեցի: Իհարկե, դրանում իր որոշիչ խոսքն է ասում նաև շարունակական ավանդույթը, այն, որ ի սկզբանե և մեկընդմիջտ հաստատագրված լեզվաոճական ձևերը՝ ներմուծված բնագիր լեզվից, յուրացվում են տվյալ լեզվի (տվյալ դեպքում հայերենի) կողմից և հարազատանում թարգման լեզվի համակարգին:

Հայտնի է, որ Սուրբ Գրքի թարգմանությունը Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները (Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցիացին և մյուսները) սկսել են Առակաց գրքից («Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»), թարգմանելով 22 հայտնի գրքերը (Հին կտակարանը՝ ըստ եբրայական կանոնի), ինչպես նաև ողջ Նոր կտակարանը: Աստվածաշնչի առաջին թարգմանության ոչ մի օրինակ մեզ չի հասել, հասել են հետագա ընդօրինակություններ: Վ դ. հայերեն բնագրի վերակազմումը դեռևս կարոտ է գիտական-հետազոտական լուրջ և խստագույն ուսումնասիրության: Դա նշանակում է հնագույն ձեռագրերի բաղդատումով վերստեղծել մի բնագիր, որը կարող է լինել Վ դ. կատարված Աստվածաշնչի հայերենը: Սակայն հիմնվելով Սուրբ Գրքի հնագույն հայերեն օրինակների վրա, կարող ենք որոշակի պատկերացում կազմել հայերեն առաջին թարգմանության լեզվի, լեզվաոճական առանձնահատկությունների, բառակազմական ձևերի, բառամթերքի և այլնի մասին առհասարակ:

Հիմնվելով Աստվածաշնչի մի շարք գրքերի հետազոտությունների (Գրիգոր Խալաթյանց, Գիրք Մնացորդաց ըստ հնագույն հայ թարգմանութեան..., Մոսկվա, 1899, Հ. Կոզեան, Մակաբայեցուց Բ Գիրքին հայերեն թարգմանութիւնը, «Հանդես ամսօրեա», 1921, 1922, 1923, Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984), ինչպես նաև գրաբար հրատարակությունների վրա (Աստուածաշունչ... Յանստերդամ, 1666, Աստուածաշունչ..., Վենետիկ, 1805 և այլն), վերջիններից առանձնացնելով հատկապես 1805-ի Վենետիկի հրատարակությունը (Հ. Ջոհրապյանի աշխատասիրությամբ), որը հիմնված է 1319-ին ընդօրինակված ձեռագիր Աստվածաշնչի վրա, ուսումնասիրելով նաև

այլ հրատարակություններ ու Սուրբ Գրքին նվիրված աշխատություններ, այստեղ փորձ է արվել մի ընդհանրական պատկերացում տալ հայերեն առաջին թարգմանության լեզվի ու ոճի մասին, այն թարգմանության, որը հիմք է ծառայել հետագա բոլոր թարգմանությունների համար և խորը դրոշմ թողել դպրության և բանավոր-ժողովրդական լեզվի ու լեզվամտածողության վրա, ինչպես և դիպուկ նկատել է Մ. Աբեղյանը (Երկեր, հ. Գ., Երևան, 1968, էջ 108): Աստվածաշնչյան լեզուն զորավոր կերպով ազդել է հայ պատմիչների (Ազաթանգեղոս, Մովսես Խորենացի, Կորյուն, Եղիշե, Փավստոս Բուզանդ և ուրիշներ), շարականագիրների, բանաստեղծների (Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի ևն) լեզվամտածողության վրա, ավելի՛ն այն լեզվամտածողություն է ձևավորել:

Առաջին հերթին, երբ քննության է ենթարկում գրաբար Աստվածաշնչի լեզվական ատաղձը, հայացված են գտնում բազմաթիվ անուններ՝ փոխանակ եբրայերենի և հունարենի: Հայացված են երկնային մարմինները (Հայկ, Բազմաստեղք, Արուսեակ), ոգիների, աստվածությունների, կենդանիների, բույսերի (վիուկ, հավահնա, յուշկապարիկ, մեռն, Վահագն, միեղջերու, յամոյր, անալութ, հավալուսն), զգեստների, զարդեղենի (պատմուճան, ծամակալ, գինդ, բեհեզ, մեհեւանդ և այլն), եբրայերեն տեղանունների անունները (Բեսաբեթի փոխարեն՝ Զրհոր երդման, Բեթելի փոխարեն՝ Տուն Աստուծոյ ևն): Դա ցույց է տալիս ոչ միայն թարգմանիչների միտումը՝ Սուրբ Գիրքը հասկանալի դարձնել հային, այլև մատնանշում է հայերի բազմաբնագավառ մշակութային զարգացածության աստիճանը: Բայց և բազմաթիվ անուններ ու հասկացություններ մնում են բնագիր լեզուներով՝ եբրայերեն, հունարեն և ասորերեն:

Հայերեն Աստվածաշնչում եբրայաբանությունները կամ հունարենից են փոխանցվել կամ էլ բուն եբրայերենից, այս հարցում հետազոտողները տարակարծիք են: Եբրայաբանությունները հիմնականում կրոնածիսական բնույթի հասկացություններ են, որոնցից են. ավելուիա (փառք և օրհնություն), ամեն (ճշմարիտ է, թող լինի), Բեղզբբուղ (սատանայի անուններից մեկը), Բելիար (նույնը), Եղեն (դրախտ, պարտեզ, առավել ընդգրկուն, քան դրախտը, որ Եղենի մեջտեղումն է), դարիբ (սրբությունների սրբություն), Արիել (Աստծո կրակարանը կամ զոհարանը), թերափիմ (տմային, թափածո կուռք), Մեսիա

(եբր. Մաշիյահ-ի հունական ձևը նշանակում է Օծյալ, Քրիստոս), մեքենովթ (խարիսխ), կորբա (տաճարին տրվող հարկ), օվսամնա (օրինության աղաղակ փրկիչ աղաղակում ենք), գեհեն (կրակ, դժոխք իմաստով), ռաբբի (ուսուցիչ, վարդապետ) և այլն: Եբրայերենի ազդեցություն է նաև յաելում բայի կիրառությունն անորոշ դերբայի հետ («Եւ դարծեալ արծակեաց գաղաւնին, և ոչ ևս դաւել դառնալ առ նա» (Շննդ. 8:12)), «Ճաշակել զմախ» (մեռնել), «ամենայն բան», «եդի գբեզ» (դրեցի քեզ) և բազմապիսի այլ ձևեր, որոնք եբրայական-սուրբգրային լեզվից ածանցված պատճենահանումներ են և հարստացնում են հայոց լեզուն նորանոր արտահայտչաձևերով: Պիտի հավելել նաև, որ նման ձևերը հիմքեր ունեն նաև գրաբարում, և դժվար է այսօր հստակ բաժանարար գիծ անցկացնել գրաբարյան ու եբրայական լեզվի շատ ու շատ արտահայտչաձևերի միջև: Միայն անհրաժեշտ է կրկին անգամ ընդգծել, որ եբրայաբանությունները, սուրբգրային դարձվածքներն առհասարակ, ոչ միայն հարստացրել են հայերենը նորանոր բառերով ու արտահայտչաձևերով, այլև մշակել մի լեզվամտածողություն, որը կապ ունի բարձրագույն բարոյական ըմբռնումների ու գերակա հոգևոր արժեքների հետ: Դա մի լեզու է, որն, ի վերջո, սերունդների մեջ հունդավորել է բարձրին, աստվածայինին մերժենալու և այն արտահայտելու լեզվական մշակույթը: Եվ, ի վերջո, հայերեն Աստվածաշնչի լեզուն հիմք է մեր նորաստեղծ գրական լեզվի ձևավորման և զարգացման համար և ուղենշում է այդ լեզվի ապագա ընթացքը:

Գրաբարյան թարգմանական լեզվի մյուս ատաղձը հունաբանություններն են, որոնց մի մասը ժամանակի ընթացքում ընդունվել է հայոց լեզվի բառապաշարի մեջ և դարձել գործածական, մի մասն էլ դուրս է մղվել: Ժամանակակից հայերենի երկու ճյուղերում (արևելահայերեն և արևմտահայերեն) կիրառվող բազում բառեր, որոնք կրում են դասականության դրոշմը, հունարենից են անցել հայերենին (օրինակ՝ բարբարոս, եկեղեցի, թատրոն կամ թօատրոն, կանոն, յասպիս, ռետին, ստադիոն, ստամոքս, տպագիոն, փիլոն, սպեղանի, եպիսկոպոս, մամոնա, հյուպատոս, տաղանդ, տարտարոս, քարտեզ, քղամիդ, քվե կամ քուեա, քրիստոնյա, օշինդր, ալֆա կամ ալփա, օմեղա կամ օմեգա և այլն): Որոշ փոխառություններ թարգմանաբար անցել են հայերենին, բայց ժամանակի ընթացքում դուրս են

մղվել կամ միտում ունեն դուրս գալու ընդհանուր գործածությունից (Չերմես - Փայլածու, հիմեն - չափ, պենտեկոստե - հոգեգալուստ, երակիկլոն - հյուսիսային քամի, քրյուսոպրասուս - թանկարժեք քար, մորուս - հիմար, լիբանոս - խնկի ծառ և այլն): Սակայն հիշյալ բառերի վերաբերյալ մի նկատառում. երբ ասվում է, թե դրանք կամ դրանց զգալի մասը միտված է դուրս մղվելու հայերենի ընդհանուր բառապաշարից, դա չի նշանակում, թե միանշանակորեն արգելվում է դրանց կիրառությունը. դրանցից շատերը կարող են և մնալ իրենց տեղում մի շարք նկատառումներով (եթե պետք է, որ սուրբգրային կոնտեքստում, իմաստին հարազատ մնալու և ժամանակն ու միջավայրը ցույց տալու համար հենց այդ բառը կիրառվի, եթե այդ կիրառությամբ որոշակի նրբիմաստ է արտահայտվում, եթե այն լեզվաոճական որոշակի գործառույթ ունի ., վերջապես, եթե այդ բառը (կամ դարձվածքը) հատկապես մոտ է սուրբգրային լեզվամտածողությանը կամ եթե վերջինս դրսևորում է ստանում հենց այդ կիրառությամբ: Այդօրինակ կիրառությունների շատ օրինակներ կարելի է բերել Գրիգոր Նարեկացու տաղերից և «Մատեան ողբերգութեան» արդթամատյանից: Սուրբգրային իմաստներն ու լեզվաոճական առանձնահատկությունները պահպանելու տեսակետից շատ դեպքերում նպատակահարմար է դիտվում նաև հակառակ պարագան հնացած հունաբանությունների փոխարինումը պարզ և հասկանալի հայերենով կամ հայերեն համարժեքներով: Օրինակ. երբ Չիսուս Գերգեսացի դիվահարին, ավելի շուտ նրա մեջ բնակվող պիղծ դևին հարցնում է, թե ի՞նչ է քո անունը, նա պատասխանում է՝ Լեզեոն (Մարկ. 5:9), քանի որ «բազում» էին: Այստեղ, բնականաբար, լեզեոնը պետք է միշտ թարգմանվի լեզեոն և ոչ թե ասենք «գնդեր»: Մինչդեռ հունարեն «լեզեոնը» պետք է «գնդեր» թարգմանել այնպիսի դեպքերում, երբ խոսքը երկնային զորքերի մասին է, ինչպես Մատթեոսի Ավետարանի 26-րդ գլխում. «Եվ կամ կարծո՞ւմ ես, թե չեմ կարող ինձ համար աղաչել, որ նա ինձ համար այստեղ հասցնի իրեշտակների ավելի քան տասներկու գնդեր» (Մատթ. 26:53): Ինչո՞ւ: Որովհետև եթե պահպանվեր բնագրային «լեզեոն»-ը, հայերեն տեքստում դա կինչեր շատ երկրային, քանի որ զուգորդական կերպով կկապվեր հունական գործի իմաստի հետ, իսկ

«զնդեր» բառը չեզոքացնում է հունական գործ (լեզեոն) իմաստը, մատնանշում երկնային գործերին հրեշտակներին:

Յետևությունը նույնն է. որևէ լեզվով Աստվածաշունչը թարգմանելիս միշտ պետք է նկատի առնել սուրբգրային տեքստը՝ իմաստը ո՞ր կողմն է հղվում և ինչի՞ն է հանգում: Ըստ այդմ գործածելի է կամ բուն հայերեն դարձվածքը (բառը) կամ փոխառությունը: Այս հանգամանքը շատ հստակ են ըմբռնել հայ առաջին թարգմանիչները և առաջնորդվել մի սկզբունքով՝ բոլոր պարագաներում պահպանել սուրբգրային իմաստները, հաղորդել դրանք հարագատորեն եթե պետք է՝ օտար բառով, իսկ եթե կարիք չի զգացվում ուրեմն հայերենով:

Առաջին թարգմանության մեջ փոխառյալ բառերի մյուս ստվար շերտը ասորաբանություններն են, ասորերեն բառերը, որոնց մի մասը գրական հայերենի մեջ գործածական են ցայսօր և հանդիսանում են հայոց լեզվի՝ ներունակ, յուրացնող ուժի վկայությունը: Այդ գրական բառերից են՝ գուր, թարգման, բուրգ, մագաղաթ, շափիւղա, մաշել, գաղութ ևն: Բառերի մի այլ խումբ, որպես փոխառություն, գործածվել է թե ժողովրդական խոսվածքում, թե գրական լեզվի մեջ, ինչպես կեղև, կողով, ձեթ, սատանա, մանանա, քահանա, քուրմ, քարոզ, քօշ, ևն: Ընդ որում, այսօրինակ բառերը կարող էին հայերեն թարգմանության մեջ մուտք գործել ոչ միայն տվյալ թարգմանության գործընթացում, այլև դրանցից շատերը արդեն իսկ ընդունված և յուրացված էին հայերեն բանավոր խոսքում, ժողովրդական խոսվածքներում, ուստի և թարգմանիչների կողմից գործածվում էին որպես բնիկ հայերեն բառեր: Անշուշտ, չի բացառվում նաև որոշ բառերի մուտքը հայերեն թարգմանության մեջ Աստվածաշունչը ասորերենից թարգմանելիս կամ ասորերեն (արամերեն, քաղդեերեն) բնագրի հետ համեմատելիս: Յետագայում ասորերեն շատ բառեր ու արտահայտություններ դուրս են եկել գործածությունից (թե Աստվածաշունչի հետագա խմբագրություններում ու թարգմանություններում, թե առհասարակ բանավոր ու գրավոր հայերենում): Այդպիսի դուրս մղված բառերից են. գաղիշ (դեզ), խարբալել (մաղել), կմախի (ողբուկոծ), շուփա (աչքի դեղ), տոփա (լաստ) և այլն:

Ասկայն առաջին հայերեն թարգմանության մասին խոսելիս, շեշտելով հանդերձ բնագիր լեզուներից ներթափանցված փոխառությունների և հայերենացված ձևերի առկայությունը, որը, ինչպես նշեցինք, պատճառաբանված էր մի շարք հանգամանքներով (բնագրային իմաստների պահպանումը, հայերենում դրանց ընդունած-յուրացված լինելը և այլն), այսուամենայնիվ, պետք է անպայման և պարտադրաբար շեշտադրել, որ Աստվածաշունչը հայ առաջին թարգմանիչների կողմից գիտակցաբար և կատարելապես հայերենացվել է, որը խոսում է հայոց լեզվի մեծ հնարավորությունների և յուրացնող ուժի ու զորավոր ներունակության մասին: Աստվածաշնչյան բազմածալ ու բազմաբարդ իմաստավորումների, արտահայտչաձևերի, բնագրային լեզվամտածողությանը բնորոշ բազմաթիվ յուրահատկությունների դիմաց հայերենը հանդես է բերել բնիկ հայերեն բառերի, բառակազմական ու բառաբարդական հնարավորությունների իրականացման, արտահայտչաձևերի հայերեն փոխարժեքների մի հսկա օվկիանոս: Հարկ է միայն, որ համաժողովրդական կիրառություն ունեցող բազմահազար բառերի մեծ մասը բնիկ հայերեն բառեր են, որոնք արտահայտում են հոգևոր-կրոնական, մշակութային, ռազմաքաղաքական ոլորտներին պատկանող շատ վերացական հասկացություններ, վերացարկումներ: Բուն հայերենին հատուկ և հունարեն նախածանցները դրվելով հայերեն բառերի վրա, կազմավորել են նորանոր բառեր, ցույց տալով հայերենի բառաստեղծական անհուն կարողությունները: Նրբիմաստների մի ստվար բազմություն են կազմում վերջածանցներով կազմված բառերը: Այդ կազմություններում վերջածանցները հիմնականում բնիկ հայերեն են և կազմում են շատ բնիկ հայերեն բառեր: Ահա, նմուշի համար՝ ընդգծելով այդ վերջածանցները (ախտաժետ, շաղախ, առյուծաբառ, վայրյգ, առավելագույն, բարձրագույն, այրեցած, երկիւղած, հալածո, ծուլածո, բարձրաբանողակ, գնդակ, լծակ, որդեակ, կրկնակն, անծամք, իրաւամք, իմաստութեամբ ևն, արամբիկանամբի, վերայ, վերջաւօ, իւրային, ամառային, գարնանային, ական, արգելան - բանտ, խթան, հեծան, շուրջանակն, հովանի, միականի, առականք, բամբասանք, հանդերձանք, գերադաստան, հեռաստան, արմատ, առնացի, բլրացի, կանաչի, իրաւ, դիւրաւ, հավաստեալ և այլ՝ տարբեր վերջածանցներով

կազմված բառեր, որոնք հիմնականում այսօր ևս կիրառելի են ժամանակակից հայոց լեզվում: Բազմաթիվ բառեր են կազմված ուօհւն ածանցով, որոնցից կազմված են վերացական հասկացություններ. հանգամանք, որ վկայում է հայոց լեզվի վերացարկման, վերացարկված մտածողության հսկայական հնարավորությունների մասին: Այդպիսի վերացարկված իմաստ ունեցող բառերից նշենք միայն մի քանիսը, որոնք բնիկ հայերեն բառեր են. արբեցուօհւն, ակնածուօհւն, անծկուօհւն, իզուօհւն, արուագիտուօհւն, գիջուօհւն, յարուօհւն, տեսուօհւն, տերուօհւն, մուրօհւն, հաստատուօհւն, զառաջաւորուօհւն, չարակնուօհւն, տնտեսուօհւն, օգնականուօհւն և այլն: Մյուս՝ շատ կիրառելի վերջածանցներից են ումն-ը և ուն-ը, ինչպես և ուտ-ը (որոնցով կազմված բառերից շատերը ևս բնիկ հայերեն են բուրդումն, ածուումն, անկումն, օծումն, ողոքումն, կոծումն, հեղումն, ջնջումն, ցրումն, ազազումն, անասումն, արթումն, հասումն, գեղումն, աւագումն, ծարաւումն, օգումն և այլն և այլն):

Քանի որ հայերենի ածանցումը շատ բազմածավալ և ընդգրկուն է, մանավանդ եթե զուգահեռաբար քննարկվեն դրանց բնագրային տարբերակները, ապա, սահմանափակվելով վերը նշված համառոտ բնութագրականով, անհրաժեշտ է անդրադառնալ կրկնավոր բարդությունների և հարադիր բայերի կարճառոտ սահմանմանը, նախապես նշելով, որ այսօրինակ կիրառությունները հատուկ են ժողովրդական լեզվամտածողությանը և Աստվածաշնչի լեզվին առհասարակ: Դրանք լեզվին հաղորդում են յուրահատուկ երանգ, ռիթմ և իմաստային միավորների կրկնությամբ ստեղծում որոշակի իմաստային ու զգացմունքային դաշտ: Գրաբարյան կրկնավոր բարդություններից են հետևյալները. երկն երբն (զույնզզույն), ազգի ազգի (տեսակ-տեսակ), ստեպ ստեպ, յայսկոյս յայնկոյս, ոհ ոհ (անջատագիր կրկնություններ), ժամ ի ժամ, հուպ ընդ հուպ, մի առ մի, իսկ եւ իսկ, շաբաթ ի շաբաթ (կապերով, շաղկապներով ու հոլովված ձևերով կրկնություններ), բարբառ, գոյնզգոյն, վաղվաղ, դեմընդդեմ (կցական կրկնություններ) և այլ տարակերպ կազմության կրկնավոր բարդություններ, որոնք լավագույնս են արտահայտում աստվածաշնչյան բանձրացյալ իմաստներն ու զգացմունքային ելևէջումները: Վ. Առաքելյանն իր «Չինգերորդ դարի հայ թարգմանական

գրականության լեզուն և ոճը» (Երևան, 1984), ուսումնասիրության մեջ մի առ մի քննարկում է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում գործածված արմատական, բարբառային, ածանցավոր և համաժողովրդական գործածության ու գրական հայերենին անցած բառաշերտերը, կրկնավոր, կցական, հողակապավոր բարդություններն ու Ա. Ե. Ը. Ու խոնարհման, ինչպես նաև պատճառական բայերը, անդրադառնում բառագործածության հաճախականությանը և այլ հարցերի: Կարևոր է նաև լեզվաոճական առումներով, հարադիր բայերի հաճախադեպ կիրառությունը: Այդ հարադրություններն ինչոր տեղ ձեռք են բերում դարձվածքային արժեք կամ հատկություն, որը շատ ուշագրավ երևույթ է՝ թե հայերենի համար առհասարակ և թե Աստվածաշնչի լեզվամտածողությունը բնութագրելու տեսակետից: Հայերենով առաջին Աստվածաշնչում նկատվում է բայական հարադրությունների և, եթե կարելի է այդպես արտահայտվել, «բայամտածողության» մի այնպիսի առատություն, որը, կամա թե ակամա, ընթերցողին հուշում է այն միտքը, թե Աստվածաշնչով շարունակում է հոսել արարչագործություններից սկիզբ առած անընդմեջ գործունեությունը, դոսևորում գտնելով բազմաթիվ ու բազմապիսի դրվագների, արարքների, արարմունքների ու գործերի մեջ: Թվում է՝ արարչագործական շարունակական ընթացքի այդ զգացողությամբ է պայմանավորված հայ թարգմանիչների «բայամտածողությունը» ևս. յաղօթս մատուցանել, երկիր պագանել, զհետ երթալ, յաւար ածել, այց առնել, ահ արկանել, ամօթ զգնուալ, հանդիման առնել, սուգ զգենալ, առաջի արկանել, փորձ փորձել, առաջի կացուցանել, ահ պատել, զահի հարկանել, յանդիման կացուցանել, ած զնոսա, անէծս ածիցեմ, հարուած ածել, ածել անգիտութիւն, զոյց բերել, ձեռն ածել, ակն ածել (ակնածել), բանս բերել, բառնալ բերել, ի կատարումն ածել, զլուխ հատանել, հրոյ տալ, վնաս գործել, գործ գործել, սուր ածել, մահ գործել և այլն և այլն: Այսօրինակ բայական հարադրություններում, նախ, ինչպես ասվեց, կարծես թե շարունակվում է մի գործողություն, որն ունի իր սկզբնական ազդակը (արարչությունը): Լեզվաոճական տեսակետից սրանք դարձվածքային արժեք ունեն՝ ձգտում են ցույց տալ շարժման, ընթացքի մեջ եղող մի խորհրդավոր գործողության ճյուղավորումները մարդկային կյանքի տարբեր բնագավառների մեջ (պատերազմ, պետությունների բարձրացում և անկում,

պաշտամունք առ Աստված, ընդհանուր բարոյական ու հոգևոր կործանում են), ընդ որում նախասկզբնական ազդակից (դիցուք արարչագործությունից) բխող այդ «գործունեությունները» կարծես թե ձգտում են կայունանալ, ձեռք բերել կայուն վիճակներ: Այսպես, երբ ասվում է «հրո տալ» (կրակին տալ), գործողությունը (հանձնելը) ձգտում է մարմնավորվել, որոշակիանալ կամ ռեալիզացվել հրի, կրակի մեջ և նրա միջոցով: Սրանք յուրօրինակ «մարմնավորումներ» են, երբ գործունեությունը, արարմունքը ձգտում է դրսևորել որևէ գոյականի, առարկայի, երևույթի միջոցով, դրանով առնչվել, կապ հաստատել նրա հետ և, ինչպես ժամանակակից բանաստեղծներից Պ. Սևակն է ասում, դրանով իսկ մարմնավորվել գոյականանալ, դառնալ գոյ: Այս դիտարկումն, իհարկե, ունի որոշ վերացական-խորհրդաբանական ուղղվածություն, բայց և որոշակի միտում ցույց տալու արարչագործությանը հետևող Սեղանչման և Ջղջման մոտիվների դրսևորումները (առարկայացումները) լեզվաոճական մակարդակում: Այսպես, «բառնալ բերել» (վերցրած բերել) կապակցության մեջ գործում է բայ (գործողություն)+ բայ (մեկ այլ հետևանքային գործողություն) մոդելը, որն իր աստվածաշնչային խորհրդաբանական մակարդակում կարող է նշանակել արարչություն + հետարարչություն կամ սկզբնական ազդակ + ետսկզբնական, ածանցյալ գործունեություն կամ պարզ ասած Աստված, որին հետևում է, հաջորդում է մարդը՝ իրեն հատուկ գործելակերպով կամ Արարչի նկատմամբ ունեցած որոշակի կողմնորոշումով: Իհարկե, այդ իմաստը բացակայում է «բառնալ բերել» հարադրության մեջ, այլ գոյություն ունի միայն վերացականորեն, ինչպես ասում են օդի մեջ: «Բառնալուն» կարող է հետևել ինչպես «բերելու», այնպես էլ «ստանալու» գործողությունը, նայած թե որն է «բառնալու» վերցնելու (շալակն առնելու) շարժառիթը: Տվյալ դեպքում Սարկոսի Ավետարանի այն դրվագն է, երբ մի անդամալույծի վերցրած բերում էին Հիսուսի մոտ, որ Հիսուս նրան բժշկի (Մարկ. 2:3):

Բայական հարադրությունների մյուս տեսակը, ինչպես բնութագրվեց վերևում, «մարմնավորումների» ձգտող բայերի (գործողությունների) միացումներն են որևէ գոյականի հետ (անձեքներ լցնել կամ թափել - անձն ածիցեմ, ահ պատել, սուգ զգենուլ, մահ գործել և այլն): Բերված օրինակներում

թափելու, լցնելու գործողությունը կամենում է «մարմնավորվել» անձեքի մեջ, հազնելու, զգեստավորվելու գործունեությունը՝ սուգ-ի մեջ, գործելու, սփռելու գործունեությունը՝ մահ-ի մեջ ևն: Այսպիսով, ամեն մի հակում կամ շարժում, փնտրում է մարմնավորման առարկա, դրսևորման կերպ: Ըստ էության այս գաղափարն է ընկած Աստվածաշնչյան այսօրինակ հարադրությունների հիմքում. յուրաքանչյուր շարժում հանգում է իր առարկայական դրսևորմանը: Ուրեմն, այսօրինակ բայական հարադրությունները Աստվածաշնչում, հատկապես եբրայական բնագրում պատահական չեն, այլ պայմանավորված են Աստվածաշնչյան և հրեական պաշտամունքային մտածողությամբ և արտահայտում են այդ որոշակի մտածողությունը: Առաջին հայ թարգմանիչները թափանցել են սուրբգրային լեզվամտածողության գաղտնիքների մեջ, վերհանել դրանք, ապա նոր միայն դրանք արտահայտել հայերեն համապատասխան փոխարժեքներով, որոնք անգնահատելի ներդրումներ են Սուրբ Գրքի հարազատ թարգմանության և հայոց լեզվի բայակերտական հնարավորությունների ուսումնասիրության բնագավառների համար, ուղեցույց նշանակություն ունեն ներկա և հետագա բոլոր աստվածաշնչային թարգմանությունների համար:

Սեկ այլ գործառույթ էլ են իրականացնում այդօրինակ հարադրությունները. այն կարելի է անվանել լեզվաոճական, եթե հարցը դիտվում է այդ տեսակետից, որովհետև ստեղծում են որոշակի լեզվաոճական տարերք. դա կարելի է անվանել նաև պատշաճախոսություն, քանի որ գործողությունները ներկայացնում են ոչ թե մերկ ձևով, այլ որոշակի զգեստավորումով: Այսպես, աղոթելու փոխարեն ասվում է «յաղօթս մատուցանել», երկրպագելու փոխարեն՝ «երկիր պագանել», ամաչելու փոխարեն՝ «ամոթ զգենուլ», հարվածելու փոխարեն՝ հարուած ածել, այցելելու փոխարեն՝ այց առնել, անիծելու փոխարեն՝ «անեծս ածիցեն», վախենալու փոխարեն՝ ահ պատել, վնասելու փոխարեն՝ վնաս գործել և այլն:

Բերված օրինակները պատշաճախոսություններ են, և պայմանավորված են նորից աստվածաշնչյան մտածողությամբ. Աստվածաշունչը ծածկոց, զգեստ, վարագույր է գործածում՝ գործողությունը կամ առարկան մերկապարանոց չներկայացնելու համար: Դա վերաբերում է և սրբություններին (Աստուծոն, որի

բուն անունը ծածկագրվում է կամ ներկայացվում այլ փոխ-անուններով, խորանին, որը ուներ տասը վարագույր, քահանաներին, որոնք պետք է հագնեին սրբության զգեստներ մաքուր կտավից) և այն երևոյթներին, որոնց անունը տրվում էր այլ կերպ՝ այլաբանորեն, վարագուրված: Կենակցությունը, օրինակ, տրվում է որպես «ճանաչելու» գործողություն: Հանդերձավորումով են հանդես գալիս նաև որոշ գործողություններ, ինչպես վերը նշված պարագայում աղոթելը, որը եթե գործածվեր միայնակ կհնչեր շատ պարզունակ և ոչ վեհորեն: Այլ է «աղոթք մատուցելու» պարագան: Սա նշանակում է նաև, որ աղոթողը ոչ թե միայն աղոթում է, այլև ընծա կամ զոհ է մատուցում, որովհետև սուրբգրային մտածողությամբ՝ աղոթքը Աստծո հրեշտակներին մատուցված զոհ է կամ ընծա, որը, դևտացիներին տրված հրահանգի համաձայն, որևէ արատ կամ բիծ չպետք է ունենա, այլ լինի միանգամայն անարատ և անբիծ, որպեսզի աղոթքները վեր Աստծուն տանող հրեշտակը (ըստ Տոբիթի գրքի Ռափայելը) կարողանա այն վեր տանել և մատուցել Աստծուն: Ուրեմն աղոթքը, որպես անարատ, սուրբ Գառի կամ Հացի ընծայի մի իմաստային հոմանիշը, պետք է մատուցվի Սուրբ Սեղանի վրա: Ասվածից հետևում է, որ թե սուրբգրային իմաստներին հարազատ մնալու, թե բնագրային լեզվաոճական առանձնահատկությունները ճշմարտապես անդրադարձնելու, թե պատշաճախոսությունը պահպանելու առումներով պետք էր թարգմանել «աղօթս մատուցանել» ձևը, հայ առաջին թարգմանիչները հենց այդ կերպ էլ ընկալել են արտահայտությունը և թարգմանել պատշաճաբար, կատարելով միաժամանակ երկու կարևոր ներդրում, հայերենով կատարյալ ճշգրտությամբ հնչեցրել սուրբգրային իմաստները, մյուս կողմից՝ նմանակերպ հարադրություններով հարստացրել հայոց լեզուն ընդարձակելով նրա լեզվաոճական հնարավորությունների սահմանները: Նույն կերպ և «ամոթ զգենուլ» և «ահ պատել» հարադրական-դարձվածաբանական արտահայտչաձևերը, այստեղ մերկապարանոց ամաչելու և վախենալու փոխարեն առկա են հանդերձավորված հասկացություններ, և դրանք փոխելը պարզ ամաչելով կամ վախենալով սխալ է: Դրանով կխախտվեր.

1. Սուրբգրային այն մտածողությունը, որ ամոթը վերևից՝ երկնավորից տրված պատիժ է, որը պետք է կրի անարգալից գործ կատարողը:

2. Վավերական այն իրողությունը, որ ամբարիշտ, վատահամբավ մարդկանց Հրեաստանում հատուկ տեսակի «ամբագանքի զգեստ» էին հագնում՝ հասարակայնորեն նրանց պարսավելու համար:

3. Այն հավատը, թե ամոթը, վախը, ցասումը, հպարտությունը և մյուս բացասական հույզերն ու զգացմունքները տրվում են դրանց «հարուցողի»՝ Չարի կամ Սատանայի կողմից, և ամոթն ու վախը, տվյալ դեպքում, ոգիներ են, որոնք պատում, շրջապատում, հագնում են մարդուն:

4. Այն հավատքը, թե Ահեղ Ղատաստանի օրը արդարները լուստ հանդերձներ են հագնելու, փառք ու վայելչություն, իսկ մեղավորները՝ խավարի զգեստներ՝ ամոթ, խայտառակություն և մշտական վախ...:

Ուստի գրաբարյան թարգմանության մեջ հաշվի է առնված ամեն ինչ, կատարելապես ներդաշնակեցված են սուրբգրային թաքնված և բացահայտ իմաստները դրանց հանդերձավորման՝ արտահայտման կերպի հետ: Բացակայում է ինքնահնար լեզվաոճական որևէ արտահայտություն, եթե դա խախտում է սուրբգրային իմաստը: Օրինակ, քվում է, թե կարելի էր «հարուած ատել» (հարված հասցնել) հարադրության փոխարեն կիրառել հարվածել ձևը, բայց դա մորից կբերեր սուրբգրային մտածողության և ոճական «դիրքավորման» խախտման: Նախ, հարված հասցնել հարադրությամբ իմաստը կենտրոնացնում է ոչ թե միայն հարվածելու, այլ նախ և առաջ «Աստծո օգնությամբ» հարված հասցնելու վրա: Թեև այստեղ բացակայում է «Աստծո օգնությամբ» կապակցությունը, բայց դա կա ենթատեքստում, և Աստվածաշնչային ընկալումով՝ հնարավոր չէ թշնամուն կամ որևէ մեկին հարվածել, եթե այդ հարվածը նրան չհասցնի ինքն Աստված՝ իր հրեշտակներին ուղարկելով:

Հարադրական՝ հատուկ կազմություն ունեցող (հատուկ՝ իմաստային երանգ ունենալու առումով) բառերից հետո գրաբարյան Աստվածաշնչի բառամթերքի մյուս ստվար բազմությունը բարդություններն են՝ բարդ բառերը, որոնք, ի տարբերություն հարադրությունների, միտված են միավորելու աստվածաշնչյան այնպիսի նրբիմաստներ, որոնք կամ բխում են մեկը մյուսից կամ էլ հակում ունեն միավորվելու՝ արտահայտելու համար մի նոր՝ հարասված իմաստ: Եվ բոլոր դեպքերում, ինչպես և նշվեց վերևում, հայ առաջին թարգմանիչները, խորամուխ և ականջալուր են սուրբգրային մտածողությանը և հավատարիմ՝ բնագրային լեզուների առանձնահատկություններին, թե տվյալ

կոնտեքստում բառը ինչ է նշանակում, որոնք են տվյալ բառի կամ արտահայտության որոշակի և փոխաբերական իմաստային սահմանները, կամ թե տվյալ բառաբարդումը արտահայտում է արդյոք, այսպես ասած, բարդացյալ կամ թանձրացյալ հոգեվիճակը, եթե առկա է դա: Նախապես ասենք, որ առկա են բարդ կազմությունների մի քանի տեսակներ (գոյական + բայ՝ անձնատուր, ածական + ածական՝ ամրածածուկ, ածական + գոյական՝ երկայնամիտ և այլ կազմություններ), որոնք կազմում են տարբեր խոսքի մասեր և, ավելորդ է ասել, արմատացել են հայոց լեզվում և անցել հետագա աշխարհաբար թարգմանություններին, դարձել աստվածաշնչյան ժամանակակից լեզվաարտահայտման հիմնական միջոցներից մեկը: Բայց ահա բարդությունների մի քանի օրինակ, ցույց տալու համար, թե տվյալ բարդությունն ինչ է արտահայտում և որն է տվյալ բարդության սուրբգրային հիմքը, այսինքն՝ տվյալ բարդությունը արդյո՞ք որոշակի մտածողության արդյունք է, թե՛ ուղղակի մեքենայաբար կազմված ինքնահնար եզր (տերմին): Օրինակ «ակնահաճոյ» բարդությունը, որ գործածված է Ծմնդոց գրքում (3:6)՝ իմացության ծառի պտուղի նկատմամբ: Ակներևաբար, այստեղ բարդությունն էր պետք՝ արտահայտելու համար եվայի բարդացած հոգեվիճակը, այն, որ այդ պտուղն իր տեսքով գրավել է նրան՝ մտել աչքը. տեղի է ունեցել աչքի (ակն) և հաճույքի ակնկալման, ցանկության միաձուլում. այս միաձուլման արտահայտությունն է հենց «ակնահաճո» բառաբարդումը: Տվյալ դեպքում որևէ հարադիր կամ անջատ կազմություն (ասենք՝ աչքին հաճելի կամ այլ կերպ) չէր արտահայտի եվայի տեսողական հափշտակման ու ներքին ցանկության միասնացումը: Նույնպիսի միասնական իմաստ և զգացում է հաղորդում նաև «զոհասեղան» բառը, երբ Նոյը Մասիս լեռան վրա ողջակեզ է մատուցում Աստծուն ի նշան զոհունակության (Ծմնդ. 8:20): Ակներև է «զոհ»-ի և «սեղան»-ի սերտ առնչությունը. չկա «զոհ» առանց սուրբ սեղանի և չկա «սեղան»՝ առանց զոհի: Չետևաբար, սույն բարդություններն ինքնանպատակ չեն, զուտ լեզվական երևույթներ չեն, այլ, առաջին հերթին, սուրբգրային մտածողությամբ հարազատ արտահայտություններ: Չետևյալ բարդությունները գործածված են Աստվածաշնչի առաջին և հետագա թարգմանություններում և գործածական են ժամանակակից հայերենում. մտացածին, սերմանաքաղ (թռչուն), երազատես, բաղարջակեր, աստուածամարտ, զերեվար, կառավար, զօրագլուխ, կտաւագործ, մարդահաճոյ, մանկաբարձ, մսահան, նախանձահոյզ, ուխտազանց,

պարգեւատու, որդեսէր, չարարուեստ, խտաճարակ. խորհրդակից, արագագիր, ծածկագետ, սնապարծ, դիւրաշարժ, խակակուբ. երկրածին, մտայոյզ, տարագիր, վայրագասուն, ծանծաղամիտ, ոսկեհամդերձ, իշանդամ. բարեհամբաւ, խստապարանոց, պղծաշուրթն, ամուլաքիղ. գայլախագ, աստուածակերպ, աշխարհագիր, գազամամարտ, ժողովրդապետ, եղեգնաքար (եղնգաքար), ամսագլուխ, ունայնածեռն, շանաճանճ, սենեկապետ, մանկամարդ, դատարկապորտ, սերմնակաթ (հիվանդ), գեղապանծ, շիկակարմիր, աստեղագետ, նանրախօս, զուարթամիտ, ծանրալեզու, քարայատակ, հիսնապետ, խորհրդակրողս, ոսկեճամուկ և այլն և այլն: Բավական է վերանայել **Գրիգոր Նարեկացու «Աստեան ողբերգութիւնը»** և արծանագրել, թե որքան շատ են բարդութիւնները՝ փոխառնված գրաբար Աստվածաշնչից և հատկապէս՝ բազում այն բարդութիւնները, որոնք ածանցված են հիշյալ բարդութիւնների հիման վրա. բազմապարզել, լուսապայծառ, ամենափորձ, վաստականուեր, նաւահանգիստ, ատամնառու, ամենագութ, յանկարծադէպ, վերարծակութիւն, լայնածաւալ և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց [աշխատասիր. Հ. Ձոհրապյան], Վենետիկ, 1805:
2. Գիրք Աստուածաշունչ Հին և Նոր կտակարանաց..., Վենետիկ-Սուրբ Ղազար, 1860:
3. Գ. Ջարբեհանալեան, Հայկ. թարգմանութիւնք ճախնեաց, Վենետիկ, 1889:
4. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962:
5. Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, Երևան, 1995:
6. Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան հազարհինգհարյուրամեակի [ժող.], Երուսաղեմ, 1938:
7. Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց [աշխատասիր. Թ. Վրդ. Աստուածատուրեան], Երուսաղեմ, 1895:
8. Լ. Տեր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա մախթոհնակը, «Էջմիածին», Ռ Ա, Դ, Ջ, Թ, Ս. Էջմիածին, 1975:
9. Մեկնութիւն Սուրբ Ավետարանին, որ ըստ Մատթէոսի՝ արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ, Կ. Պոլիս, 1825:
10. Ստեփանոս Սյունեցի, Մեկնութիւն Ավետարանի [աշխատասիր. Գարեգին կաթողիկոս Հովսեփյան], Երևան, 1992:
11. Новая женеvская учебная Библия, Hanssler-Verlag, 1998:
12. Պ. Բերթումյան, Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու, Կալկաթա, 1846: